Հրանտ Մաթևոսյան



Արձակագիր, կինոսցենարիստ, Գրականության ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակակիր, ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի ասպետ:

Ծնվել է 1935թ. Ալավերդի-Թումանյանի շրջանի Ահնիձոր գյուղում:

1952 թվականին տեղափոխվել է Երևան: 1958-1962թթ. սովորել է Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմալեզվաբանական ֆակուլտետում, 1965-1967թթ. մասնակցել է Մոսկվայի բարձրագույն սցենարական դասընթացներին:

1955-58թթ. աշխատել է գրաշար՝ Երևանի N2 տպարանում, 1958-62թթ.՝ սրբագրիչ «Սովետական գրականություն» ամսագրում և «Գրական թերթում»: Գրական մուտքը 1961 թվականին էր, երբ լույս տեսավ «Ահնիձոր» ակնարկը:

1964 թվականից՝ ԽՍՀՄ գրողների միության անդամ: 1995-2000թթ. նախագահել է Հայաստանի գրողների միությունը:

Նրա հեղինակած ժողովածուներից են՝ «Օգոստոս» (1967թ.), «Ծառերը» (1978թ.), «Մեր վազքը» (1978թ.), «Տերը» (1983թ.), իսկ 1985թ. լույս տեսավ ստեղծագործության ընտրանին՝ «Երկեր» երկհատորյակը: Ժողովածուներում ընդգրկված են արձակի տարբեր ժանրերի ստեղծագործություններ (վիպակ, պատմվածք, պիես), որոնցից են՝ «Բեռնաձիեր», «Մենք ենք, մեր սարերը», «Աշնան արև», «Գոմեշը», «Խումհար», «Ծառերը», «Մեծամոր», «Բաց երկնքի տակ հին լեռներ», «Կանաչ դաշտը», «Հացը», «Մեր վազքը», «Պատիժը», «Այս կանաչ-կարմիր աշխարհը», «Չեզոք գոտի», «Ջաղացը», «Տերը», «Տաշքենդ» և այլն: Նրա սցենարների հիման վրա են նկարահանվել «Մենք ենք, մեր սարերը», «Աշնան արև» ֆիլմերը:

Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունները թարգմանվել և հրապարակվել են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լիտվերեն, մոլդովերեն, էստոներեն, վրացերեն, ղազախերեն, ուկրաիներեն, չեխերեն, հունգարերեն, նորվեգերեն, ռուսերեն, բուլղարերեն և այլ լեզուներով:

Մահացել է 2002թ.: